Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու
առաջարկությունների վերաբերյալ
16.01.2012թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ 7069
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	1350	18.7
դիմում	5300	74.2
բողոք		
կրկնակի	180	2.5
կոլեկտիվ	239	3.3

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ 1548

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	1374	88.7
բողոք	174	11.2

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	116	1.6
կոմունալ-կենցաղային	16	0.2
շինարարական	72	1.1
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	8	0.1
բնութ. պահպանութ.		
առևտրի	1	0.01
կենսաթոշակային	119	1.6
առողջապահության	31	0.4
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	2889	40.8
օրենսդրական	239	3.3
քաղ. և որդեգրման հաշվառման	137	1.9
աշխ. և աշխատավարձի	328	4.6
ապարատային		
այլ հարցեր	3097	43.8
սեփականաշնորհում	16	0.2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2011Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 7069 նամակներից մոտ 18.7%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 11.2%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 74.2%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 40.8%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 4.6%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 1.6%-ը առնչվում է բնակարանային, 0.2%-ը կոմունալ-կենցաղային, 1.1%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 43.8% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 6864-ին տրվել է գրավոր, իսկ 143-ին բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 62-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն